Գլխավոր տեղեկություն	
Համար	N 979-Ն
Տիպ	Որոշում
Ակտի տիպ	Հիմնական ակտ (19.09.2009-մինչ օրս)
Կարգավիճակ	Գործում է
Սկզբնաղբյուր	ՀՀԳՏ 2009.09.15/26(344) Հոդ.1032
Ընդունող մարմին	ՀՀ կառավարություն
Ընդունման ամսաթիվ	27.08.2009
Ստորագրող մարմին	ՀՀ վարչապետ
Ստորագրման ամսաթիվ	31.08.2009
Ուժի մեջ մտնելու ամսաթիվ	19.09.2009

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

27 օգոստոսի 2009 թվականի N 979-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2002 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 1-Ի N 299 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Հարկերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածին համապատասխան՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ***որոշում է.***

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի ապրիլի 1-ի «Որոշ ապրանքների արտադրության և շրջանառության ֆիզիկական ծավալների ու գների վերաբերյալ հաշվետվությունները հարկային մարմիններ ներկայացնելու կարգը հաստատելու մասին» N 299 որոշման մեջ կատարել հետևյալ լրացումները՝

1) որոշման 2-րդ կետը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ «գ» ենթակետով.

«գ) «ՀայՌուսգազարդ» փակ բաժնետիրական ընկերությունը Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեին տրամադրում է տեղեկություններ յուրաքանչյուր ամսվա ընթացքում ավտոտրանսպորտային միջոցների գազալցման (գազալիցքավորման) գործունեություն իրականացնողներին մատակարարված գազի ֆիզիկական ծավալների մասին: Տեղեկությունները ներկայացվում են ըստ յուրաքանչյուր գազալցման կայանի (կետի)՝ մինչև տվյալ ամսվան հաջորդող ամսվա 15-ը ներառյալ՝ համաձայն N 4 հավելվածի:

Մատակարարված գազի ֆիզիկական ծավալների մասին տեղեկությունները ներկայացվում են թղթային և էլեկտրոնային տարբերակով:».

2) որոշումը լրացնել նոր՝ N 4 հավելվածով՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Հայաստանի Հանրապետության վարչապետ **Տ. Սարգսյան**

2009 թ. օգոստոսի 31
Երևան

Հավելված
ՀՀ կառավարության 2009 թվականի
օգոստոսի 27-ի N 979-Ն որոշման

«Հավելված N 4
ՀՀ կառավարության 2002 թվականի
ապրիլի 1-ի N 299 որոշման

Ձև

Տ Ե Ղ Ե Կ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն Ն Ե Ր

ԱՎՏՈՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԳԱԶԱԼՑՄԱՆ (ԳԱԶԱԼԻՑՔԱՎՈՐՄԱՆ) ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂՆԵՐԻՆ ՄԱՏԱԿԱՐԱՐՎԱԾ ԳԱԶԻ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԾԱՎԱԼՆԵՐԻ ՄԱՍԻՆ

20 թ. _____ ամսվա ընթացքում

NN ը/կ	Հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ)	Հարկ վճարողի անվանումը	Ավտոտրանսպորտային միջոցների գազալցման (գազալիցքավորման) կայանի գտնվելու վայրը (հասցեն)	Մատակարարված բնական գազի ֆիզիկական ծավալը (քանակությունը), նխմ	Այլ նշում
1.					
2.					
3.					
4.					
5.					

Հարկ վճարողի

_____ _____ _____
(ներկայացուցչի պաշտոնը) (ստորագրությունը) (անունը, ազգանունը)

_____ _____ 200 թ.»:

Հայաստանի Հանրապետության
կառավարության աշխատակազմի
ղեկավար **Դ. Սարգսյան**

Փոփոխման պատմություն

Փոփոխող ակտ **Համապատասխան ինկորպորացիան**

Փոփոխված ակտ

Փոփոխող ակտ **Համապատասխան ինկորպորացիան**